

ԱԿԱԴԵՄԻԱԿԱՆ ՆՎԱՃՈՒՄՆԵՐԻ ԿԵՆՏՐՈՆ

Գործունեություն / Կրթական ծրագրեր / Օգտակար հղումներ / Աշխատակազմ / Միջոցառումներ

ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ

Ֆրանկոֆոնիայի համալսարանական գործակալությունը (ՖՀԳ) (Agence Universitaire de la Francophonie) «Ակադեմիական նվաճումների կենտրոն» անվանումը շնորհում է ՖՀԳ-ի անդամ համալսարանների այն գիտաուսումնական կենտրոններին, որոնք համապատասխանում են ՖՀԳ-ի պահանջներին:

Կենտրոնն աջակցում է ֆրանկոֆոն ուսանողներին, ինչպես նաև երիտասարդ ֆրանկոֆոն հետազոտողներին և գիտնականներին՝ նպաստելով նրանց գիտական առաջընթացին ու ճանաչմանը: ՖՀԳ -ի տրամադրած միջոցներով ապահովում է արդիական գիտական տեղեկատվության մատչելիություն, նպաստում է միջհամալսարանական համագործակցության հետագա զարգացմանը, կազմակերպում է ֆրանսերեն լեզվի դասըթացներ /FLE/՝ համալսարանի ուսանողների, դասախոսների և վարչական անձնակազմի համար՝ ապահովելով լսարանային և առցանց գրականությամբ:



ՃՇՅԱՋ ԱԿԱԴԵՄԻԱԿԱՆ ՆՎԱՃՈՒՄՆԵՐԻ ԿԵՆՏՐՈՆԻ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ

Ֆրանկոֆոն համալսարանների ասոցիացիայի (ՖՀԱ) «Ակադեմիական նվաճումների կենտրոն» անվանումը տրվում է ՖՀԱ-ի իսկական և ասոցիացված անդամ համալսարանների անհրաժեշտ սարքավորումներով հագեցված ուսումնամեթոդական տարածքներին, որոնք համապատասխանում են ներկայիս կանոնադրության սկզբունքներին :

Կենտրոնն ապահովում է բարձրագույն ուսումնական հաստատության ուսումնամեթոդական տարածքներին հատուկ ծառայություններ, որոնք համապատասխանում են Համալսարանի ռազմավարական նպատակներն ապահովող տեխնիկական լուծումներին :

«Ակադեմիական նվաճումների կենտրոն» անվանումը ՖՀԱ-ի կողմից շնորհվում է Կենտրոնին նախագծի սկզբից (2013) մինչև նախագծի ավարտը (2017), երբ շահառու Համալսարանը հնարավորություն կունենա Կենտրոնը դարձնել իր սեփականությունը:

Ակադեմիական նվաճումների կենտրոնը պարտավորվում է՝

Ընդունել յուրաքանչյուր դասավանդողի, գիտաշխատողի կամ ուսանողի՝ առանց ռասայական, գենդերային, հավատքի, լեզվի խտրականության :

Մշտապես պահպանել կենտրոնը համապատասխանորեն կահավորված, տեխնիկապես հագեցած, համացանցին միացված՝ Համալսարանի հետազոտող-դասախոսի և հատուկ տեխնիկական սպասարկում իրականացնող աշխատակազմի ուժերով :

Ապահովել պայմանագրի հավելվածում նշված աշխատատեղերի նվազագույն քանակը : Խստորեն հարգել հեղինակային իրավունքները ազգային և միջազգային նորմերին համապատասխան :

Ապահովել հատուկ տարածք տեսակոնֆերանսների համար, կազմել ժամանակացույց, աշխատանքային ծրագիր :

Առաջարկել հետևյալ ծառայությունները՝ համացանցից օգտվելու հնարավորություն, առցանց և լսարանային վերապատրաստումներ, ապահովել գիտական և տեխնիկական տեղեկատվության մատչելիություն ՖՀԱ-ի տրամադրած միջոցներով :

Ֆրանսախոս ղեկավարի միջոցով կազմակերպել համալսարանական բնագավառի օգտատերերի աշխատանքը՝ համաձայն Կենտրոնի ներքին կանոնադրությանը :

Ղեկավարել յուրաքանչյուր գործունեություն. նպաստել օգտատերերի գիտական առաջխաղացմանը, աղբյուրների պատշաճ օգտագործմանը՝ ապահովելով նրանց գործունեության թափանցիկությունը :

Մասնակցել ՖՀԱ-ի Կենտրոնական և Արևելյան Եվրոպայի բաժնի կողմից կազմակերպված միջոցառումներին և նախագծերին :

Կանոնավոր կերպով տեղեկացնել տեղական շահառուներին ՖՀԱ-ի գործունեության մասին :

Ապահովել համացանցից անվտանգ օգտվելու հնարավորությունը՝ երաշխավորելով անձնական տվյալների գաղտնիությունը :

Կենտրոնի մուտքի մոտ փակցնել ներկայիս կանոնադրությունը՝ ապահովելով վերջինիս մատչելիությունը :

Հաստատված է Երևանում, 31 հոկտեմբեր 2013

ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐ

ՃՇՀԱՀ Ակադեմիական նվաճումների կենտրոն

Կենտրոնը հնարավորություն է ընձեռում Համալսարանի ֆրանկոֆոն ուսանողներին մասնակցել ՖՀԱ Կենտրոնական և Արևելյան Եվրոպայի բաժնի կողմից առաջարկվող կրթական ծրագրերին՝ (բուհական և հետբուհական կրթություն): Առաջարկվող ծրագրերի կարող էք ծանոթանալ հետևյալ հղումների միջոցով՝

<http://www.auf.org/bureau-europe-centrale-et-orientale/appels-offre-regionales/appel-candidatures-master-didactique-du-francais-e/>, <http://www.auf.org/appels-offre/concours-dadmission-a-linstitut-de-la-francophonie/>, http://www.auf.org/media/adminfiles/EI_2013-2014_FR_r%C3%A8glement_final_1.pdf, <http://www.auf.org/appels-offre/mobilites-de-stage-professionnel/>.

ՕԳՏԱԿԱՐ ՀՂՈՒՄՆԵՐ

<http://www.auf.org/>

<http://cartographie.auf.org/>

<http://www.auf.org/bureau-europe-centrale-et-orientale/>

<http://www.ifag.auf.org>

<http://www.auf.org/bureau-europe-centrale-et-orientale/actions-regionales/actions-francophones/centres-de-reussite-universitaire/>

<http://www.codfreurcor.iliauni.edu.ge/index.php/universites-membres>

<http://www.mae.ro/fr/node/4939>

<http://brusov.am/en/education/masters-department/master-francophone/didactique-du-fle-et-tice>

<http://brusov.am/en/education/masters-department/master-francophone/trad-specialisee-et-gestion-de-projet>

<http://brusov.am/en/education/masters-department/master-francophone/langue-lit-et-civilisation-francaises>

<http://www.auf.org/bureau-europe-centrale-et-orientale/actions-regionales/actions-francophones/centres-de-reussite-universitaire/>

ԱՇԽԱՏԱԿԱԶՄ

Նույնե Հովհաննիսյան, բանասիրական գիտությունների թեկնածու, ՃՇՀԱՀ լեզուների ամբիոնի ասիստենտ, կենտրոնի պատասխանատու:

Ավարտել է Վ. Բյուրսովի անվան օտար լեզուների պետական ինստիտուտը և նույն ինստիտուտի ասպիրանտուրան: Գիտական երեք աշխատության հեղինակ է: Մասնակցել է մասնագիտական որակավորման բարձրացման դասընթացների Ռուսիայում, Երևանի Ֆրանկոֆոնիայի թվայի կենտրոնում: 2006թ.-ից աշխատում է ՃՇՀԱՀ-ում, 2015թ. սեպտեմբերից Ակադեմիական նվաճումների կենտրոնի պատասխանատուն է:

ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ

1. 2014-2015 ուսումնական տարվա ընթացքում համալսարանի աշխատակիցների և ուսանողների համար ֆրանսերենի ուսուցման անվճար դասընթացներ:
2. ՃՇՀԱՀ ճարտարապետության և դիզայնի ֆակուլտետի ֆրանկոֆոն ուսանողների մասնացություն «Նկարում ենք ֆրանկոֆոնիա» մրցույթին՝ 05.01.2015-20.03.2015:
3. Ֆրանկոֆոնիայի երկամսյան կի շրջանակներում ՃՇՀԱՀ ուսանողների և դասախոսների մասնակցությամբ բաց դռների օրերի կազմակերպում՝ 23.03.2015-27.03.2015 :
4. Վերսալի ճարտարապետության վերաբերյալ սեմինար-ցուցադրություն՝ կազմակերպված ՃՇՀԱՀ-ի ճարտարապետության ֆակուլտետի ուսանողների և ֆրանկաֆոնիայի ակադեմիական նվաճումների կենտրոնի կողմից՝ 2015թ. ապրիլի 10-ին: